ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՔՐԻՍՏԻՆԱ ԱՆԱՆՅԱՆ
ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ. ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման ապահովման գործընթացում իր ուրույն և նշանակալի տեղն ու դերակատարումն ունի աշխատանքի շուկան: Այս առումով առաջնային և չափազանց արդիական է աշխատանքի շուկայի արդյունավետ կարգավորումը: Այդ նպատակով անհրաժեշտ է նախևառաջ գնահատել աշխատանքի շուկայի վիճակը, ինչն էլ հնարավորություն կընձեռի վեր հանելու դրանում առկա հիմնախնդիրները և համապատասխան քաղաքականության միջոցով ոլորտում կատարել անհրաժեշտ փոփոխություններ: Վերջիններիս հիմնական թիրախը պետք է լինեն երկրի աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ապահովումն ու զբաղվածության մակարդակի բարձրացումը, որոնք մարդկանց բարեկեցության և կյանքի որակի բարելավման գրավականներն են:

Հիմնաբառեր. *աշխատանքի շուկա, աշխատանքային ռեսուրսներ, տնտեսական ակտիվության մակարդակ, զբաղվածության մակարդակ, գործազրկության մակարդակ, զբաղվածության կարգավորում, զբաղվածության ակտիվ քաղաքականություն*

JEL: J0, J01, J2

Աշխատանքի շուկան ժամանակակից շուկայական տնտեսության կարևորագույն տարրերից է, որն էականորեն ազդում է մարդկային գործունեության սոցիալ-աշխատանքային հարաբերությունների համակարգի վրա և արտացոլում է հասարակության ներսում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական գրեթե բոլոր փոփոխությունները՝[1] միևնույն ժամանակ սերտորեն փոխ-

[1] Տե՛ս **Остапенко Ю.М.,** Экономика труда: учебное пособие, 2-е издание. М., “ИНФРА–М”, 2007, էջ 51:

ազդելով այլ շուկաների հետ (ապրանքների ու ծառայությունների, կապիտալի և այլն):

Ինչպես հայտնի է, մակրոտնտեսական ցուցանիշների համադրելիության ապահովման նպատակով տարբեր միջազգային կազմակերպությունների իրավունք է վերապահված մշակելու միասնական մեթոդաբանություն՝ երկրի տնտեսությունը բնութագրող ցուցանիշների հաշվարկման համար: Այսպես՝ աշխատանքի շուկան բնութագրող ցուցանիշների սահմանման և գնահատման մեթոդաբանության համար պատասխանատու է Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ): Համաձայն վերջինիս սահմանման՝ **աշխատանքի շուկան մի ոլորտ է, որտեղ գործատուներն ու վարձու աշխատողները խմբային կամ անհատական բանակցություններ են վարում՝ աշխատանքի վարձատրման կամ դրա պայմանների համաձայնեցման նպատակով**[2]:

Ընդհանրացնելով տնտեսագիտական գրականության մեջ առկա «աշխատանքի շուկա» հասկացության սահմանումները՝ դա կարող ենք բնութագրել հետևյալ կերպով. **աշխատանքի շուկան այնպիսի տնտեսական և աշխարհագրական տարածք է, յուրահատուկ ոլորտ, որի միջոցով տնտեսական, սոցիալական և իրավական գործիքների օգնությամբ իրագործվում է մարդկանց աշխատանքի տեղավորման գործընթացը, ինչպես նաև հնարավոր է դառնում գործատուների և վարձու աշխատողների միջև վերջիններիս աշխատանքային ունակությունների առքի ու վաճառքի հարցերի շուրջ համաձայնեցումը՝ երկուսի միջև աշխատանքի գնի ու պայմանների պարզաբանումից և ընդհանուր հայտարարի գալուց հետո:**

Աշխատանքի շուկաներում տեղի ունեցող վերոշարադրյալ գործընթացներում հանդես են գալիս որոշակի սուբյեկտներ և օբյեկտներ: Այսպես՝ ***աշխատանքի շուկայի սուբյեկտներն են*** գործատուները, վարձու աշխատողները և պետությունը, իսկ ***օբյեկտները***՝ ոչ նյութական բարիք համարվող վարձու աշխատանքը, աշխատանքի պահանջարկն ու առաջարկը: Աշխատանքի շուկայի սուբյեկտ–օբյեկտ հարաբերություններում իրենց կարգավորիչ դերակատարումն ունեն ***աշխատանքի շուկայի միջնորդները***՝ ի դեմս արհմիությունների, աշխատանքի բորսաների, զբաղվածության ծառայությունների, կադրերի պատրաստման գործակալությունների և այլն:

Երկրի տնտեսության բարդ և բազմագործոն համակարգում աշխատանքի շուկայի կատարած դերի կարևորությունը բացահայտվում է դրա կողմից իրագործվող ***գործառույթների*** միջոցով: Մասնավորապես՝ աշխատանքի շուկայի արդյունավետ կառավարմամբ լուծելի են դառնում հասարակության առջև ծառացած այնպիսի էական հիմնախնդիրներ, ինչպիսիք են.

- աշխատանքի առաջարկի և պահանջարկի կարգավորումը,
- աշխատուժի բաշխումն ըստ տարբեր չափորոշիչների՝ տարածաշրջաններ, տնտեսության ոլորտներ ու ճյուղեր, մասնագիտություններ, զբաղվածության տեսակներ ու ձևեր և այլն,
- գործատուների և վարձու աշխատողների միջև կառուցողական բանակցությունների, այսպես ասած, նրանց «հանդիպումների» կազմակերպումը,
- գործատուների ու վարձու աշխատողների շրջանում մրցակցության ապահովումը,

[2]Տե՛ս http://economic-definition.com/Employment/Rynok_truda_Labor_market_eto.html

- տնտեսական գործունեության արդյունքում ձեռք բերված եկամուտների և աշխատավարձերի բաշխումը, դրանց հավասարակշռված դրույքաչափերի սահմանումը,
- գործազուրկների սոցիալական պաշտպանվածության ապահովումը,
- աշխատանքային, սոցիալական և իրավական հարաբերությունների կարգավորումը՝ միտված աշխատանքային տարատեսակ պայմանագրեր կնքելուն,
- բնակչության զբաղվածության հիմնախնդիրների լուծմանն աջակցությունը[3] և այլն:

Աշխատանքի շուկայի վիճակի գնահատման համադրելիության ապահովման տեսանկյունից հույժ արդիական է այնպիսի հասկացությունների և ցուցանիշների կիրառումը, որոնք միասնական են երկրների համար: Այդպիսին են, օրինակ՝ ԱՄԿ-ի կողմից մշակված «աշխատանքային ռեսուրսների թվաքանակ», «տնտեսական ակտիվության մակարդակ», «զբաղվածության ու գործազրկության մակարդակներ» և այլ ցուցանիշներ:

Հետևաբար՝ աշխատանքի շուկայի վիճակը բնութագրող ելակետային ցուցանիշներից են **աշխատանքային ռեսուրսները՝** որպես հասարակության հիմնական արտադրողական ուժ, որը ստեղծում է նյութական ու հոգևոր բարիքներ, մատուցում ծառայություններ: Ըստ ԱՄԿ սահմանման՝ **աշխատանքային ռեսուրսների թվաքանակը տնտեսապես ակտիվ և տնտեսապես ոչ ակտիվ բնակչության հանրագումարն է (15–75 տարեկան)**[4]: Որպես տնտեսագիտական հասկացություն՝ սույն ցուցանիշը կարող է հաշվարկվել նաև որպես աշխատունակ տարիքի աշխատունակ բնակչության, աշխատունակ տարիքից ցածր ու բարձր տնտեսապես ակտիվ բնակչության հանրագումարի և աշխատունակ տարիքի, սակայն պաշտոնապես անաշխատունակ ճանաչվածների թվաքանակի տարբերություն:

Լայն տարածում ունի նաև **«մարդկային ռեսուրսներ»** եզրույթը, որն արտահայտում է մարդկանց՝ որոշակի աշխատանք կատարելու համար անհրաժեշտ այնպիսի բնութագրիչների ու հատկանիշների ամբողջությունը, ինչպիսիք են անհատի գիտելիքները, մասնագիտական հմտությունները, փորձը, կարողությունները[5] և այլն:

Սույն հոդվածի շրջանակներում կատարված հետազոտությունների հիմքը «աշխատանքային ռեսուրսներ» հասկացության՝ ԱՄԿ սահմանումն է:

Ուշագրավ է, որ ՀՀ բնակչության 66.2%-ն աշխատունակ տարիքի է[6], չնայած, համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, այդ ցուցանիշը վերջին 5 տարում նվազել է: Այսպես՝ 2016 թ. աշխատանքային ռեսուրսների թվաքանակը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 4.5 տոկոսային կետով՝ 2106.6 հազ.-ից հասնելով 2 011.4 հազ.-ի, որից՝ տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմում է 61.0%, տնտեսապես ոչ ակտիվը՝ 39.0%:

Քանի որ «աշխատանքային ռեսուրսներ» հասկացությունը ներառում է աշխատունակ տարիքի բնակչությանը, ապա ամբողջական պատկերացում կազմելու համար նպատակահարմար է ցուցանիշը վերլուծել ըստ սեռի և տարիքային խմբերի (աղյուսակ 1):

---

[3] Տե՛ս **Трунин С.Н.,** Экономика труда: учебник, М., “Экономика”, 2009, էջ 139–140:

[4] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2011–2015, վիճակագրական ժողովածու, Եր., 2016, էջ 9:

[5] Տե՛ս **Յու.Մ. Սուվարյան,** Մենեջմենթ, Եր., «Տնտեսագետ», 2016, էջ 481:

[6] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2016, Եր., 2016, էջ 27:

Աղյուսակ 1

ՀՀ աշխատանքային ռեսուրսների կազմն ըստ սեռի և խմբերի 2012–2016 թթ. (%)[7]

	2012	2013	2014	2015	2016
Ընդամենը	*100*	*100*	*100*	*100*	*100*
այդ թվում՝ ըստ սեռի					
տղամարդ	44.4	44.5	43.9	44.6	45.0
կին	55.6	55.5	56.1	55.4	55.0
այդ թվում՝ ըստ տարիքային խմբերի					
15–19	9.8	8.8	9.1	8.7	8.3
20–24	11.7	11.0	11.2	10.5	9.5
25–29	10.3	10.8	11.0	10.9	10.4
30–34	9.0	9.3	9.4	9.8	9.8
35–39	7.6	8.1	7.7	8.3	8.6
40–44	7.3	6.7	7.8	7.5	7.3
45–49	8.8	7.9	7.8	7.6	7.6
50–54	10.4	10.1	10.8	9.7	9.1
55–59	8.4	9.6	9.6	10.3	10.5
60–64	7.0	7.8	7.1	7.4	8.8
65–69	3.8	4.1	4.5	5.7	5.9
70–75	5.9	5.8	3.9	3.6	4.1

Այսպես՝ դիտարկվող բոլոր տարիներին աշխատանքային ռեսուրսներում կանանց տեսակարար կշիռը գերազանցել է տղամարդկանց տեսակարար կշիռը միջինում 11.0 տոկոսային կետով: Աշխատանքային ռեսուրսները տարիքային բաշխվածությամբ վերլուծելիս պարզ է դառնում, որ մինչև 2016 թ. գերակշռել են 20–24 և 25–29 տարեկանները, որոնց միջին ցուցանիշը 2012–2015 թթ. համապատասխանաբար 11.1% և 10.75% է: 2016 թ. պատկերը փոխվել է. աշխատանքային ռեսուրսներում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն 55–59 (10.5%) և ապա միայն 25–29 տարեկան անձինք (10.4%): Բարձր տեսակարար կշռով են բնութագրվում նաև 30–34, 20–24 և 50–54 տարեկանները. համապատասխանաբար՝ 9.8%, 9.5% և 9.1%: Ինչ վերաբերում է 65–69 և 70–75 տարեկաններին, ապա նրանք աշխատանքային ռեսուրսների կազմում ունեն ամենացածր տեսակարար կշիռները. համապատասխանաբար՝ 4.8% և 4.7%:



Գծապատկեր 1. ***ՀՀ աշխատանքային ռեսուրսներն ըստ ՀՀ մարզերի 2016 թ. (%)***[8]

[7] http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_23%20Employment%20and%20unemployment/PS-eu-9-2016.px/table/tableViewLayout2/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a

[8] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2012–2016, վիճակագրական ժողովածու, Եր., 2017, էջ 105:

Աշխատանքային ռեսուրսների բաշխվածությունը կարելի է դիտարկել նաև ըստ տարածաշրջանների (մարզերի)՝ համաձայն գծապատկեր 1-ի տվյալների: Աշխատանքային ռեսուրսների ամենամեծ տեսակարար կշիռը բնութագրական է ք. Երևանին՝ 32.2%, ապա Արմավիրին՝ 10.4% և Կոտայքին՝ 9.8%: Խնդրո առարկա ցուցանիշի մակարդակը բավականին բարձր է նաև Արարատում (9.2%), Լոռիում (9.1%) և Շիրակում (9.0%), իսկ ամենացածր մակարդակը՝ ընդամենը 1.6%, արձանագրվել է Վայոց ձորում: Ցուցանիշի մակարդակը համեմատաբար ցածր է նաև Արագածոտնում ու Սյունիքում (երկու մարզերում էլ՝ 4.0%), Տավուշում և Գեղարքունիքում, համապատասխանաբար՝ 4.3% և 6.4%:

Աշխատանքի շուկան բնութագրող մյուս ցուցանիշը, ինչպես նշել ենք վերևում, **տնտեսական ակտիվության մակարդակն է՝ տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռն աշխատանքային ռեսուրսներում**[9]: Սույն ցուցանիշի դինամիկան 2012–2016 թթ. ներկայացված է գծապատկերում.



Գծապատկեր 2. *ՀՀ տնտեսական ակտիվության մակարդակը 2012–2016 թթ. (%)*[10]

Տնտեսական ակտիվության մակարդակն ուղղակիորեն կախված է տնտեսապես ակտիվ բնակչության թվից, իսկ վերջինիս ցուցանիշի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են ՀՀ-ում ծնելիության ու մահացության հարաբերակցությունը, քաղաքացիների տեղաշարժերը, այն է՝ երկրից ելքերն ու մուտքերը կամ միգրացիան, ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի առանձնահատկությունները և այլն: Օրինակ՝ քաղաքացիների տեղաշարժերի ցուցանիշի ազդեցությունը տնտեսական ակտիվության մակարդակի վրա ունի հետևյալ դրսևորումը. 2012–2016 թթ. ՀՀ քաղաքացիների տեղաշարժերի հաշվեկշռի (քաղաքացիների՝ երկրից ելքի և մուտքի տարբերությունը) ամենացածր ցուցանիշը գրանցվել է հենց 2013-ին՝ 42 011 մարդ[11], իսկ ամենաբարձրը՝ 2016-ին՝ 54 031 մարդ[12]: Միևնույն ժամանակ, ըստ դիտարկվող տարիների, տնտեսական ակտիվության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է 2013 թ.՝ 63.4%, իսկ ամենացածրը 2016 թ.՝ 61%: Ընդ որում, ուսումնասիրվող ժամանակաշրջանում ՀՀ-ից մեկնողների

[9] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2011–2015, վիճակագրական ժողովածու, Եր., 2016, էջ 20:
[10] http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_23%20Employment%20and%20unemployment/PS-eu-7-2016.px/table/tableViewLayout2/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a
[11] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2014, Եր., 2014, էջ 44:
[12] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք - 2017, Եր., 2017, էջ 44:

68.2%-ը և 2.8%-ը, համապատասխանաբար, նպատակ են ունեցել արտերկրում աշխատելու և աշխատանք փնտրելու[13]:

Աշխատանքի շուկայի մասին համապարփակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել նաև այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են զբաղվածության և գործազրկության մակարդակները: Այսպես՝ **զբաղվածության մակարդակը զբաղվածների թվի մասնաբաժինն է աշխատանքային ռեսուրսներում**, իսկ **գործազրկության մակարդակը՝ գործազուրկների տեսակարար կշիռը տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակում[14]:**



Գծապատկեր 3. *Զբաղվածները և գործազուրկները ՀՀ-ում 2014–2016 թթ. (%)*[15]

Ըստ գծապատկեր 3-ի տվյալների՝ դիտարկվող տարիների միջակայքում ՀՀ-ում զբաղվածության մակարդակը դրսևորել է նվազման, մինչդեռ գործազրկությանը՝ և՛ աճի, և՛ նվազման միտումներ: Մասնավորապես՝ եթե 2014 թ. զբաղվածության մակարդակը եղել է 52.0%, իսկ գործազրկության մակարդակը՝ 17.6%, ապա 2016 թ. առաջին ցուցանիշը, նախորդ տարվա համեմատությամբ, նվազել է 0.7 տոկոսային կետով՝ հասնելով 50.2%-ի, իսկ երկրորդը՝ 0.5 տոկոսային կետով՝ դառնալով 18.0%: Ընդ որում, դիտարկելով գործազրկության մակարդակի՝ իբրև աշխատանքի շուկայի վիճակը բնութագրող էական գործոնի փոփոխությունը՝ պարզվում է, որ, շատ դեպքերում, այն ուղղակի կապ ունի **տնտեսական ակտիվության ցուցանիշի (երկրի տնտեսությունում արտադրանքի թողարկման իրական ծավալի փոփոխության ամսական ագրեգացված ցուցանիշ[16])** հետ. վերջինիս աճը հիմնականում ուղեկցվում է գործազրկության մակարդակի նվազմամբ, և հակառակը: Այսպես, ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, 2015 թ. ՏԱՑ-ի՝ 0.6 տոկոսային կետով նվազումն[17] ուղեկցվել է գործազրկության մակարդակի՝ 0.9 տոկոսային կետ աճով, երբ 2016 թ. ՏԱՑ-ն աճել է 0.5 տոկոսային կետով, իսկ գործազրկության մակարդակը նվազել է 0.5 տոկոսային կետով[18]:

---

[13] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու-2016, վիճակագրական ժողովածու, Եր., 2016, էջ 108–109:

[14] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2011–2015, վիճակագրական ժողովածու, Եր., 2016, էջ 48, 122:

[15] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Հայաստանը թվերով 2017, վիճակագրական գրքույկ, Եր., 2017, էջ 31:

[16] Տե՛ս http://www.armstat.am/file/article/sv_12_11a_6400.pdf

[17] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2016, Եր., 2016, էջ 51:

[18] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ. հունվար–փետրվարին, տեղեկատվական ամսական զեկույց, Եր., 2017, էջ 41:

Այսպիսով՝ ՀՀ աշխատանքի շուկայի թվային բնութագրիչների հիմնականում բացասական դինամիկան դրանում առկա հիմնախնդիրների հետևանք է: Որպես այդպիսիք կարելի է առանձնացնել, օրինակ՝ տվյալ աշխատատեղը զբաղեցնելու համար աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող որակական պահանջների անհամատեղելիության պատճառով աշխատանքի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը, ոչ ֆորմալ զբաղվածության համեմատաբար բարձր մակարդակը, աշխատանքային ռեսուրսների մեծածավալ արտագաղթը, ինչն իր հերթին հանգեցնում է ՀՀ-ից «ուղեղների» արտահոսքի և այլն: Աշխատանքի շուկայի զարգացմանը խոչընդոտող այսպիսի խնդիրների լուծմանը կնպաստի այնպիսի միջոցառումների իրագործումը, ինչպիսիք են օրենսդրական բարեփոխումների իրականացումը՝ կապված, օրինակ՝ աշխատանքային միգրացիայի կարգավորման, գյուղացիական տնտեսությունների կարգավիճակի՝ որպես բիզնես միավորների հստակեցման և այլնի հետ, գյուղացիական աշխատուժին զբաղվածության պետական ծրագրերում ներգրավելը, տարածաշրջանային աշխատանքի շուկաների համաչափ զարգացումը, երիտասարդներին և կանանց՝ որպես գործազրկության մակարդակի նվազեցմանը նպաստող նպատակային խմբեր դիտարկելը (նրանց շրջանում գործազրկության մակարդակը համեմատաբար բարձր է. 2016 թ., համապատասխանաբար՝ 50.1% և 50.6%[19]), ինչպես նաև աշխատաշուկայում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ բնակչության իրազեկման ապահովումը և այլն:

Ամփոփելով նշենք, որ ՀՀ կառավարության՝ Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում՝ աշխատանքի շուկայի կարգավորման համատեքստում, **աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և զբաղվածության մակարդակի բարձրացումը**[20] սահմանվել են որպես ՀՀ տնտեսության զարգացման գերակայություններ: Հարկ ենք համարում փաստել, որ սույն գերակայությունների իրագործման ուղղությամբ ՀՀ-ում արդեն իսկ ձեռնարկվել են որոշակի քայլեր: Օրինակ՝ ՀՀ կառավարության կողմից ստեղծվել է «Հայաստանի ներդրողների ակումբ» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդը (նախատեսում է 300 մլն ԱՄՆ դոլարի ներդրում տնտեսության տարբեր ոլորտներում), մշակվում և իրագործվում են զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրեր, այդ թվում՝ ըստ մարզերի, և դրանց շրջանակներում իրականացվում են այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող անձանց մասնագիտական ուսուցման ու վերապատրաստման կազմակերպումը, ունեցած մասնագիտությամբ աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրումը, աշխատանքի տոնավաճառների կազմակերպումը, գործազուրկներին այլ վայրում աշխատանքի տեղավորմանն աջակցությունը, սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին օգնության տրամադրումը[21] և այլն:

Ներկայացված և նմանատիպ այլ միջոցառումները զբաղվածության ակտիվ քաղաքականության բաղկացուցիչներ են, այսինքն՝ այնպիսի քաղաքա-

---

[19] Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2011–2015, վիճակագրական ժողովածու, Եր., 2016, էջ 123, 124:

[20] Տե՛ս ՀՀ կառավարություն, Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, Եր., 2014, էջ 74:

[21] Տե՛ս http://employment.am/uploades/2017-pet.%20tsragir-marzer.doc

կանության, որն ուղղված է ոչ թե հիմնախնդիրների հետևանքների, այլ հենց դրանք ծնող պատճառների վերացմանը: Զբաղվածության ակտիվ քաղաքականության համակարգում կարևոր դերակատարում ունի նաև աշխատավարձի քաղաքականությունը, որը վերոշարադրյալ միջոցառումների հետ համատեղելիս կնպաստի երկրի տնտեսության սոցիալ-տնտեսական վիճակի և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, հետևաբար՝ կյանքի որակի բարելավմանը:

Օգտագործված գրականություն

1. Սուվարյան Յու.Մ., Մենեջմենթ, Եր., «Տնտեսագետ», 2016:
2. ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2011–2015, վիճակագրական ժողովածու, Եր., 2016:
3. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու–2016, վիճակագրական ժողովածու, Եր., 2016:
4. ՀՀ ԱՎԾ, Հայաստանը թվերով, 2017, վիճակագրական գրքույկ, Եր., 2017:
5. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2012–2016, վիճակագրական ժողովածու, Եր., 2017:
6. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ. հունվար-փետրվարին, տեղեկատվական ամսական զեկույց, Եր., 2017:
7. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, Եր., 2014:
8. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, Եր., 2016:
9. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2017, Եր., 2017:
10. Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, Եր., 2014:
11. Òðóíèí Ñ. Í., Ýêîíîìèêà òðóäà: ó÷åáíèê, Ì., “Ýêîíîìèêà”, 2009.
12. Îñòàïåíêî Þ. Ì., Ýêîíîìèêà òðóäà: ó÷åáíîå ïîñîáèå, 2-å èçäàíèå, Ì., “È ÍÔÐÀ- Ì”, 2007.
13. George J. Borjas, Labor Economics, seventh edition, McGraw-Hill Education, NY, 2015.
14. D.H. Autor D.H., Studies of Labor Market Intermediation, University of Chicago Press, 2009.
15. www.armstat.am
16. www.armstatbank.am
17. www.economic-definition.com
18. www.employment.am
19. www.ilo.org

КРИСТИНА АНАНЯН
Аспирант кафедры управления АГЭУ

Рынок труда РА: состояние и проблемы.– В процессе обеспечения экономического развития любой страны уникальное, значимое место и роль имеет рынок труда. В этом смысле приоритетным и весьма актуальным является вопрос эффективного регулирования рынка труда. Для осуществления данной цели необходимо, в первую очередь, дать оценку состоянию рынка труда, что позволит выявить существующие в нем проблемы, и посредством соответствующей политики осуществить необходимые изменения в данной сфере. Основная цель этих изменений – обеспечение эффективного использования трудовых ресурсов и увеличение уровня занятости, что является залогом улучшения благополучия и качества жизни людей.

Ключевые слова: *рынок труда, трудовые ресурсы, уровень экономической активности, уровень занятости, уровень безработицы, регулирование занятости, активная политика занятости.*
JEL: J0, J01, J2

KRISTINA ANANYAN
Post-graduate at the Chair of Management at ASUE

Labor Market RA: Its State and Problems.— In the process of each country's economic development provision, labor market has its unique, significant place and role. In this regard the issue of effective employment regulation is a priority and extremely urgent. In order to realize the given purpose first of all it's necessary to assess the state of the labor market, which will give an opportunity to reveal the problems in it and make necessary changes in the domain through appropriate policy. The main target of those changes should be the effective use of labor resources and increase of the employment rate, the factors that are pledges for improving people's welfare and quality of life.

Key words: labor market, labor resources, economic activity rate, employment rate, unemployment rate, employment regulation, active employment policy.
JEL: J0, J01, J2